# ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԻՊ ԷՋԵՐԻՑ

*«Էջմիածին» ամսագրի սույն համարում հրատարկում ենք Կոմիտաս վարդապետի եկեղեցական երաժշտության վերաբերյալ անտիպ էջերից և երեք նմուշ։*

*Դրանցից առաջին մշակումը վերնագրված է «Ալէլուիա Պայծառակերպութեան»։ Ինչպես նկատվում է Կոմիտաս վարդապետի ինքնագրի լուսանկարում, բնագրի վրա մատիտով կատարված են սրբագրական ճշտումներ Կոմիտաս վարդապետի ձեռքով։ Արտագրելիս մենք նկատի չենք առել այս նշումները, որովհետև դրանք մեծ մասամբ անընթեռնելի են. վերարտադրել ենք սևաթանաք նախնական գրության վրայից։*

*Կոմիտաս վարդապետը «Պայծառակերպութեան ալէլուիա»-յի այս մշակումը դաշնավորել է Պայծառակերպության տոնի երկրորդ՝ երկուշաբթի օրվա «Հարց»-ից առաջ երգվող «Ալէլուք»-ից։ Նա վերցրել է այս «Ալէլուք»-ի երկրորդ տան առաջին հատվածը՝ «Լերինք ընծայեցեն առաջի Տեառն, զի գայ և հասեալ է Տէր ի դատել զերկիր»։ Այնուհետև, «Պայծառակերպության երկրորդ օրվա «Ալէլուք»-ին միացրել է որպես շարունակություն երեքշաբթի օրվա «Ալէլուք»-ի նույնպես երկրորդ տան առաջին հատվածը՝ «Լերինք որպէս մոմ հալեցին յերեսաց Տեառն, յերեսաց Տեառն ամենայն երկիր»։*

*«Պայծառակերպութեան ալէլուիա»-ի այս մշակումն ունի երկու մաս, առաջինը բազմաձայն, իսկ երկրորդը՝ քառաձայն։*

*Հրատարակության հանձնված երկրորդ անտիպ բնագիրը մշակումն է «Պատարագի Սուրբ Աստուած»-ի։ Սա մեկ ուրիշ տարբերակն է Կոմիտասյան և Եկմալյան սուրբ պատարագի երգեցողության ժամանակ Ճաշու գրքից առաջ երգվող «Սուրբ Աստուած» երեքսրբենի երգի մայր եղանակի։*

*Կոմիտասյան ծանոթ պատարագի մեջ «Սուրբ Աստուած»-ը եռաձայն դաշնավորում է, իսկ այժմ հրատարակվող պատարագի «Սուրբ Աստուած»-ը քառաձայն է, նույնքան հարազատ Կոմիտասյան և Եկմալյան «Սուրբ Աստուած»-ի մշակումների այն եղանակներին, իր բնույթով նույնքան հաջող, վեհ և հանդիսավոր։*

*Հրատարակվող երրորդ անտիպ բնագիրը մշակումն է «Խաչի Սուրբ Աստուած»-ի, որ երգվում է խաչի տոներին և Ավագ Ուրբաթ՝ Քրիստոսի թաղման արարողության ընթացքում։ Ունի հանդիսավոր, ծանր և վեհ եղանակ։*

*«Խաչի Սուրբ Աստուած»-ի Կոմիտասյան ինքնագիր բնագիրը ևս ունի մատիտով կատարված սրբագրություններ, որոնք, նույն կարգի այլ ուղղումների համեմատությամբ, ավելի պարզ են և դյուրընթեռնելի։ Մշակումը քառաձայն խառն խմբի համար է կատարված։*

ԱՐՍԵՆ ԱԲԵՂԱ ԲԵՐԲԵՐՅԱՆ

# ԱԼԼԵԼՈՒԻԱ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

ԳՐԻ ԱՌԱՒ ՈՒ ԴԱՇՆԱԿԵՑ՝
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ






# ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ ՊԱՏԱՐԱԳԻ






# ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ ԽԱՉԻ

ԾԱՆՐԱԳՈՅՆ-ՎԵՀ



